30 մարտի 2015թ. N 179-Ն

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԽՐԱՄՈՐԹԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Խրամորթի ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման 2015 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը.

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատու է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմը.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմը եռամսյակային հաշվետվություն է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ սույն Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների մասին.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի մարտի 30-ի
N 179-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԽՐԱՄՈՐԹԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2015 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Խրամորթի ենթաշրջանը (այսուհետ՝ ենթաշրջան) գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի հյուսիսային և հարավ-արևելյան մասերում: Այն ընդգրկում է Խրամորթ, Փառուխ, Խնապատ, Արմենակավան, Նախիջևանիկ, Վարդաձոր, Սառնաղբյուր, Ուղտասար համայնքները, որոնց հեռավորությունը մայրաքաղաք Ստեփանակերտից տատանվում է 21-34 կիլոմետրի սահմաններում, իսկ Ասկերան շրջկենտրոնից՝ 3-16 կիլոմետրի սահմաններում:

Ենթաշրջանի համայնքներում առկա հողային ու աշխատանքային ռեսուրսները, ինչպես նաև բնակլիմայական պայմանները հնարավորություն են տալիս զարգացնել ինչպես հողագործությունը, այնպես էլ անասնապահությունը, ինչն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ենթաշրջանի պարենային ապահովության մակարդակի բարձրացման, բնակչության զբաղվածության ապահովման ու կենսամակարդակի բարձրացման համար, որոնցով և պայմանավորված է սույն Ծրագրի կարևորությունը:

Ինչպես հայտնի է, գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործընթացը մեծապես կախված է տեխնիկական զինվածության աստիճանից: Այս նկատառումով, 2014 թվականին ներդրումներ են իրականացվել ենթաշրջանում գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերման համար, ինչը հնարավորություն կտա գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպել պատշաճ և ժամանակին:

Ծրագրով նախատեսվում է շարունակել ենթաշրջանի տեխնիկական հագեցվածության աստիճանի բարձրացման քաղաքականությունը, ինչպես նաև՝ նախադրյալներ ստեղծել անասնապահության զարգացման համար:

I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակը.

Ենթաշրջանում առկա հողային, աշխատանքային, տեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործման արդյունքում ստեղծել բնակչության կենսապայմանների աստիճանական բարելավման, բնակչության արտահոսքի մեղմման և կանխման, արժանավայել ու անվտանգ ապրելու և բարիքներ ստեղծելու համար անհրաժեշտ նախադրյալներ:

Խնդիրները.

1) ենթաշրջանի համայնքներում բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերի համաչափ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում.

2) առկա գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք ու արդյունավետ օգտագործման նպատակով նյութատեխնիկական միջոցներով ապահովվածության մակարդակի բարձրացում.

3) ենթաշրջանի համայնքների բնակչության աշխատունակ հատվածի համար լիարժեք զբաղվածության ապահովում:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ենթաշրջանում կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման նպատակով 2015 թվականին անհրաժեշտ է իրականացնել ստորև ներկայացվող միջոցառումները՝

1) Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում. գյուղատնտեսության ինտենսիվացման, նրա արդյունավետության բարձրացման կարևոր նախապայմաններից է գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի արդիականացումը, տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացումը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա՝ երկու անիվավոր տրակտոր, մեկ հացահատիկային շարքացան, մեկ ծղոտամամլիչ, երկու խոտհնձիչ (մոտոբլոկ), ինչը կնպաստի աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Նախատեսված 6 500 000 ՀՀ դրամը, ներկայացված հայտերի հիման վրա, կուղղվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով ձեռք բերվելիք գյուղատնտեսական տեխնիկայի համար սահմանվող գնի 20 տոկոս կանխավճարի մարմանը.

2) Խոշոր եղջերավոր անասունների ձեռքբերում. անասնագլխաքանակի ավելացումը ենթադրում է ոչ միայն թարմ և վերամշակված անասնապահական մթերքների նկատմամբ կարիքների բավարարում, այլև կայուն զբաղվածության ապահովում և եկամուտների ավելացում: Ծրագրով նախատեսվում է 16 250 000 ՀՀ դրամ հատկացնել խոշոր եղջերավոր անասունների ձեռքբերման նպատակով, որը կտրամադրվի վարկի տեսքով:

Ծրագրի իրագործման համար 2015 թվականին պահանջվող ներդրումներն ըստ եռամսյակների և ծրագրի իրագործման համար 2015 թվականին պահանջվող ներդրումներն ըստ համայնքների ներկայացված են NN 1 և 2 աղյուսակներում:

Աղյուսակ N 1

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2015 թվական	այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1.	Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում	6 500 000		3 500 000		3 000 000
2.	Խոշոր եղջերավոր անասունների ձեռքբերում	16 250 000		5 000 000	6 250 000	5 000 000
ԸՆԴԱՄԵՆԸ		**22 750 000**		**8 500 000**	**6 250 000**	**8 000 000**

Աղյուսակ N 2

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Համայնքի անվանումը	Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում		Խոշոր եղջերավոր անասունների ձեռքբերում		Ընդամենը համայնքում
		Միավոր (հատ)	Ընդամենը գումար	Գլուխ (հատ)	Ընդամենը գումար	
1	Արմենակավան			50	12 500 000	12 500000
2	Խնապատ					
3	Խրամորթ	2	3 000 000			3 000 000
4	Վարդաձոր			15	3 750 000	3 750 000
5	Ուղտասար	4	3 500 000			3 500 000
Ընդամենը		**6**	**6 500 000**	**65**	**16 250 000**	**22 750 000**

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխան ներդրումներ կատարելու դեպքում ծրագրի իրականացումից ակնկալվում է ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջընթաց, որն առաջիկա տարիներին կդրսևորվի հետևյալ արդյունքներով՝

1) ենթաշրջանում գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումը կնպաստի ժամանակին և ագրոկանոններին համապատասխան մշակությանը, ինչպես նաև կհամալրի առկա գյուղատնտեսական տեխնիկայի պարկը.

2) դրական տեղաշարժեր կլինեն բուսաբուծության և անասնաբուծության ներճյուղային կառուցվածքում.

3) անասնագլխաքանակի ավելացման նպատակով ձեռք կբերվի 65 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որոնց բուծման արդյունքում տվյալ տարում և հետագա տարիներին կարտադրվի 52 000 կիլոգրամ կաթ և 7 800 կիլոգրամ միս կենդանի քաշով, դրանց ընդհանուր գումարը, գործող գներով, տվյալ տարում կազմում է 15 080 000 ՀՀ դրամ.

4) տեղական արտադրության հաշվին կբարձրանա որոշ պարենամթերքների ապահովվածության մակարդակը.

5) գյուղատնտեսության ոլորտի գործունեության արդյունքում կբարձրանա բնակչության զբաղվածության մակարդակը, կավելանան եկամուտները:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ